Արձանագրություն N 5

«ՇՀԱՊՁԲ-15/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/03)» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **« 17 » « մարտի » 2016թ.**
Ժամը՝ 11 ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ն.Իսահակյան, Վ.Կիրակոսյան
Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան, Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՇՀԱՊՁԲ-15/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/03)» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՇՀԱՊՁԲ-15/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/03)» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2016 թվականի մարտի 12-ին, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Տոնէքս» ՍՊ, «Կոմպաս» ՍՊ, «Ստարկոպի» ՍՊ և «Պատրոն Ռմ» ՍՊ ընկերությունների ներկայացրած «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

2.1. Չափաբաժիններ 1; 3; 7; 8; 9-ով հաղթող ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Տոնէքս» ՍՊԸ-ին,

2.2. Չափաբաժիններ 2; 4-ով հաղթող ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Կոմպաս» ՍՊԸ-ին,

2.3. Չափաբաժիններ 5; 6-ով հաղթող ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Ստարկոպի» ՍՊԸ-ին

2.4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» կետը, ծանուցել հաղթող ճանաչված «Տոնէքս» ՍՊ, «Կոմպաս» ՍՊ և «Ստարկոպի» ՍՊ ընկերություններին առաջարկվող ապրանքների անվանման և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

2.5. «ՇՀԱՊՁԲ-15/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/03)» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը՝ 2016թ. մարտի 22-ին, ժամը 11:30-ին, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական 3 շենք, 5-րդ հարկ, ՀՀ բնապահպանության նախարարություն, 514 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ն.Իսահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Վ.Կիրակոսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան